



ԱՄԲՈՂՁԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Ստորև ներկայացրած են ԱԶԲ Հակակոռուպցիոն Քաղաքականության խախտումները: Հաստատելու արդյունքում, կազմակերպությունը/անհատը կարող է գրկվել ԱԶԲ կողմից ֆինանսավորվող, կառավարվող կամ աջակցվող գործունեությանը մասնակցելու իրավունքից:

- **Կոռուպցիոն գործողություններ՝** ուղղակի կամ անուղղակի կերպով առաջարկել, տալ, ստանալ կամ շորթել արժեք ներկայացնող ցանկացած բան՝ այլ անձի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդեցություն ունենալու նպատակով:
- **Խարդախ գործողություններ՝** ցանկացած գործողություն կամ բացթողում, ներառյալ՝ ապատեղեկատվություն, որը միտումնավոր կերպով ապակողմնորոշում կամ փորձում է մոլորեցնել այլ կողմին՝ ֆինանսական կամ այլ օգուտ ստանալու կամ որևէ պարտավորությունից խուսափելու նպատակով:
- **Հարկադրական գործողություններ՝** որևէ կողմին կամ կողմի ունեցվածքին ուղղակի կամ անուղղակի կերպով փասսել կամ փասսելու սպառնալիք ներկայացնել՝ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդեցություն ունենալու նպատակով:
- **Գաղտնի համաձայնություն՝** երկու կամ ավելի կողմերի միջև պայմանավորվածության ձեռքբերում՝ նպատակաուղղված ստանալու ոչ պատշաճ արդյունքներ, ներառյալ այլ կողմի գործողությունների վրա ոչ պատշաճ կերպով ազդեցություն ունենալը:
- **Չարաշահում՝** դիտավորյալ կերպով կամ բացարձակ անտեսման արդյունքում ԱԶԲ գործունեությանն առնչվող ակտիվների գողություն, վատնում կամ ոչ պատշաճ օգտագործում:
- **Շահերի բախում՝** ցանկացած իրավիճակ, որում կողմն ունի հետաքրքրություններ, որոնք կարող են ոչ պատշաճ կերպով ազդել նրա պաշտոնական պարտավորությունների, պայմանագրային պարտականությունների կամ կիրառվող օրենքների և կարգերի պահպանման և իրականացման վրա:
- **Օբստրուկտիվ գործողություններ՝** (ա) միտումնավոր կերպով ոչնչացնել, կեղծել, փոփոխել կամ թաքցնել ԱԶԲ հետաքննությանն առնչվող ապացույցները; (բ) քննիչներին տրամադրել կեղծ տեղեկատվություն՝ ԱԶԲ հետաքննությանը խոչընդոտելու նպատակով; (գ) չկատարել ԱԶԲ հետաքննությանը վերաբերող տեղեկատվություն, փաստաթղթեր կամ այլ նյութեր տրամադրելու պահանջները; (դ) սպառնալ, անհանգստացնել կամ ահաբեկել ցանկացած կողմի՝ նրա կողմից հետաքննությանն առնչվող տեղեկատվության տրամադրումը կանխելու նպատակով; կամ (ե) նշանակալի կերպով խոչընդոտել աուդիտի, ստուգման կամ տեղեկատվություն ստանալու ԱԶԲ պայմանագրային իրավունքներին:

ԱԶԲ Հակակոռուպցիոն Քաղաքականության հնարավոր խախտումների վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում, կապնվեք Հակակոռուպցիոն Գրասենյակին՝